

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2015 Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Երեւան 2016

ՆԱԽԱԲԱՆ	2
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ ..	10
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ	13
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	15
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	17
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	18
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	19
ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ	21
Վրաստան	21
Իրան	21
Թուրքիա	22
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ.....	23
ԱՊՀ.....	23
ԱՍԻԱ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ	25
ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ	27
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ	29
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30
Միավորված ազգերի կազմակերպություն	30
ՅՈՒՆԵՍԿՕ	31
ԵԱՀԿ	31
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	33
Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն	33
Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն.....	33
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	34
ԳԼՈՔԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ	35
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	36
ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....	37
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	37
Սեվծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն.....	38
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	38
ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ.....	39
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	39
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ	40

ՆԱԽԱԲԱՆ

2015 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՀՀ Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների և նրա կողմից տրված հանձնարարականների հիման վրա շարունակել է աշխատանքները՝ ուղղված երկրի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, արտերկրում Հայաստանի բարեկամների թվի ավելացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության զարգացմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող և մեր շահերին համահունչ նախաձեռնությունների իրականացմանը, արտերկրում մեր քաղաքացիների շահերի պաշտպանությանը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին հայկական դիվանագիտությունը շարունակել է իր ջանքերը **Հայոց ցեղասպանության** միջազգային ճանաչման և դատապարտման, դրա վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև ցեղասպանությունների ու մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղություններով:

2015թ. ընթացքում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ջանքերով կամ մասնակցությամբ հազարավոր միջոցառումներ են կազմակերպվել ողջ աշխարհում:

Տարին նշանավորվել է մի շարք պետությունների ղեկավարների, խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող հատուկ հայտարարությունների և բանաձևերի ընդունմամբ:

Առանձնահատուկ կարևորություն է ունեցել Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ի՝ ապրիլի 12-ին Սուրբ Պետրոսի տաճարում անցկացրած հատուկ պատարագը և նրա կարևորագույն ուղերձը, ինչը համաշխարհային հնչեղություն է ստացել:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը, մի քանի տասնյակ երկրների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ: Մի շարք պետությունների ղեկավարներ իրենց երկրներում մասնակցել են Մեծ Եղեռնի հիշատակի միջոցառումներին:

Արտագործնախարարությունն իր կարևոր ներդրումն է ունեցել ապրիլի 22-23-ը Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի կազմակերպման և անցկացման աշխատանքներում:

Հայաստանի նախաձեռնությամբ մարտի 27-ին ժնկում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդն ընդունել է Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը, որը վերահաստատում է, որ ցեղասպանության հանցագործության ժխտման և արդարացման փորձերը հանդիսանում են կանխարգելմանն ուղղված քայլերի լուրջ խոչընդոտ: Բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային նաև առաջարկվել է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի ընդունման օրը՝ դեկտեմբերի 9-ը, սահմանել որպես ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի օր, ինչը և հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Հայաստանի նախաձեռնությամբ ընդունված բանաձևով:

Աշխարհի բոլոր մայրցամաքներում հեղինակավոր լրատվամիջոցները հզոր տեղեկատվական և իրազեկման ալիք են բարձրացրել, հազարավոր հրապարակումներ և հաղորդումներ են եղել Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

2015թ. Հայաստանը շարունակել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների հետ համատեղ ջանքերը՝ ուղղված **ղարաբաղյան հիմնախնդրի** բացառապես խաղաղ կարգավորմանը:

Նոր թափ են ստացել Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի կոպտագույն խախտումները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ – Ադրբեջան շփման գծում, այդ թվում նաև՝ մեծ տրամաչափի զինատեսակների կիրառմամբ, ինչը հանգեցրել է բազմաթիվ մարդկային զոհերի, ներառյալ քաղաքացիական բնակչության շրջանում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարվա ընթացքում իրենց հրապարակային հայտարարություններում հասցեական կոչեր են հղել Ադրբեջանին՝ չսրելու իրավիճակը հակամարտության գոտում, վերահաստատելու �ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հանձնառությունը, իրականացնելու վստահության ամրապնդման միջոցներ, ընդունելու միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման վերաբերյալ առաջարկությունները, զերծ մնալու բանակցային միակ ձևաչափ հանդիսացող Մինսկի խմբի համանախագահության միջնորդական ջանքերը քննադատելուց և հարգելու նրանց մանդատն ու ԵԱՀԿ դիտորդների առաքելությունը, դադարեցնելու բանակցային գործընթացն այլ ձևաչափեր տեղափոխելու փորձերը:

Ադրբեջանն արհամարհել է համանախագահների՝ իրեն ուղղված վերոհիշյալ կոչերը, գնացել է իրավիճակի առավել սրմանը, ինչի պատճառով չի հաջողվել առաջընթաց գրանցել ինչպես հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման շուրջ, այնպես էլ՝ հրադադարի ռեժիմի և վստահության

ամրապնդման միջոցների վերաբերյալ միջազգային հանրության աջակցությունը վայելող եռանախագահների առաջարկություններն իրականություն դարձնելու գործում:

Դեկտեմբերի 19-ին շուրջ մեկ տարվա դադարից հետո Բեռնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը: Ադրբեջանի կողմից հակամարտության գոտում իրավիճակի սրման պայմաններում գազաթափողովի օրակարգը կենտրոնացած էր լարվածության նվազեցման վրա: Հանդիպումը կրկին ցույց տվեց, որ Ադրբեջանի դիրքորոշումը հակասում է ոչ միայն Հայաստանի, այլև՝ համանախագահների մոտեցումներին:

2015թ. հունվարից Հայաստանը դարձել է **Եվրասիական տնտեսական միության** անդամ, ինչը բխում է Հայաստանի ռազմավարական շահերից, նոր հնարավորություններ է բացում երկրի տնտեսական զարգացման համար՝ այդ ինտեգրացիոն ձևաչափում բարենպաստ պայմաններ ստեղծելով ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման տեսանկյունից: Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի հոկտեմբերին ընդունված որոշման համաձայն, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան 2016 թ. փետրվարից չորս տարի ժամկետով կնախագահի Հայաստանի կողմից առաջադրված Տիգրան Սարգսյանը:

2015թ. սեպտեմբերին Հայաստանը ստանձնել է **Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ)** նախագահությունը՝ շարունակելով հանդես գալ այդ կառույցում որպես նախաձեռնող և ակտիվ մասնակից: Մոսկվայում դեկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության ղեկավարի նախագահությամբ կայացել է Հավաքական անվտանգության խորհրդի նիստը: Կառույցում Հայաստանի նախագահության ընթացքում՝ սեպտեմբերին Նյու Յորքում, իսկ դեկտեմբերին Բելգրադում տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների հանդիպումները՝ նվիրված արտաքին քաղաքականության համադրման հարցերին:

Ռուսաստանի Դաշնության հետ դաշնակցային, ռազմավարական գործընկերության ամրապնդումը շարունակել է առանցքային տեղ զբաղեցնել ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում:

Երկկողմ և բազմակողմ ձևաչափերում ՀՀ և ՌԴ նախագահները մոտ մեկ տասնյակ հանդիպում են են ունեցել, որոնց արդյունքներով ձեռք են բերվել ռազմավարական նշանակություն ունեցող պայմանավորվածություններ քաղաքական, առևտրատնտեսական, ռազմատեխնիկական, էներգետիկ, գիտակրթական, մշակութային և այլ ոլորտներում:

Տարվա ընթացքում շարունակվել են ինտենսիվ փոխայցելություններն ու հանդիպումները խորհրդարանների ղեկավարների, վարչապետների,

արտգործնախարարների, ճյուղային գերատեսչությունների ղեկավարների մակարդակներով:

Տեղի են ունեցել միջկառավարական, միջխորհրդարանական, ռազմատեխնիկական համագործակցության հանձնաժողովների նիստերը, Երևանում կայացել է Հայ-ռուսական չորրորդ միջտարածաշրջանային համաժողովը:

Շարունակել է ակտիվորեն զարգանալ բարեկամական գործընկերությունն **Ամերիկայի Միացյալ Նահանգների** հետ:

Մայիսի 5-7-ը կայացել է ՀՀ Նախագահի այցն ԱՄՆ: Հանրապետության Նախագահը ներկա է գտնվել Վաշինգտոնի ազգային մայր տաճարում Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառմանը, որին մասնակցել է նաև ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը:

Հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Հայաստանի և ԱՄՆ-ի միջև արտոնագրային ռեժիմի դյուրացման մասին պայմանավորվածությունը: Մայիսի 7-ին ստորագրվել է ՀՀ և ԱՄՆ միջև առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիրը, որի հիման վրա ստեղծված Առևտրի և ներդրումների խորհրդի անդրանիկ հանդիպումը կայացել է նոյեմբերի 17-ին Երևանում: Նոյեմբերի 19-ին Երևանում անցկացվել է հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստը:

ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում կարևոր տեղ է շարունակել զբաղեցնել **Եվրամիության** հետ հարաբերությունների զարգացումը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մայիսին մասնակցել է Ռիգայում կայացած Արևելյան գործընկերության չորրորդ գագաթաժողովին: Հուլիսի 20-ին Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկն այցելել է Հայաստան: Հունվարին Եվրոպական միության կենտրոնակայանում կայացել է Հայաստան - Եվրոպական միություն խորհրդի նիստը:

Ապրիլին ՀՀ ԱԳ նախարարը Լյուքսեմբուրգում մասնակցել է ԵՄ և Արևելյան գործընկերության արտգործնախարարների, մայիսին՝ Բրատիսլավայում կայացած Արևելյան գործընկերության և Վիշեգրադյան քառյակի ԱԳ նախարարների հանդիպումներին, հունիսին՝ Մինսկում և նոյեմբերին՝ Թբիլիսիում կայացած Արևելյան գործընկերության երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական հանդիպումներին:

Դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և ԵՄ միասնական արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոզերինին ազդարարել են ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերությունների նոր իրավական հիմք հանդիսացող համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը:

Բարձր մակարդակի փոխայցելություններ և հանդիպումներ են կայացել մի շարք եվրոպական երկրների հետ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Իտալիա, Լատվիա, Սերբիա, Կիպրոս, Չեխիա և այլն:

Նշանակալի աշխատանքներ են իրականացվել հարևան պետությունների՝ **Վրաստանի և Իրանի** հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ:

Վրաստան են այցելել Հանրապետության Նախագահը, վարչապետը: Փոխայցելություններ են կատարել խորհրդարանների ղեկավարները: Կայացել են հայ-վրացական տարբեր մակարդակների շուրջ երկու տասնյակ փոխայցելություններ և հանդիպումներ:

Տարին բավական ակտիվ է եղել Իրանի հետ երկկողմ բարձրաստիճան այցերի առումով: Հայաստան են այցելել ԻԻՀ նախագահի առաջին տեղակալը, արտաքին գործերի նախարարը, արդարադատության, էներգետիկայի, մշակույթի նախարարները: Իրան այցելություններ են կատարել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, առողջապահության, էկոնոմիկայի նախարարները: 2015թ. առաջընթաց է արձանագրվել առևտրատնտեսական փոխգործակցության բնագավառում, Թեհրանում և Երևանում անցկացվել են հայ-իրանական գործարար համաժողովներ:

Թուրքիայի ոչ կառուցողական դիրքորոշման պատճառով հայ-թուրքական հարաբերություններում դրական տեղաշարժ չի արձանագրվել: Փետրվարի 16-ին Նախագահ Սարգսյանը խորհրդարանից հետ է կանչել 2009թ. ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները:

Շարունակվել է ներգրավվածությունն **Անկախ պետությունների համագործակցության** շրջանակներում իրականացվող փոխգործակցությանը: Հայաստանը գործնական մասնակցություն է ունեցել ԱՊՀ կառույցներում ծավալվող գործընթացներին, ինչպես նաև քայլեր է ձեռնարկել ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի զարգացման նպատակով:

Հայաստանը շարունակել է ընդլայնել հարաբերությունները Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետությունների հետ:

Մարտին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը **Չինաստան:** Նախագահ Սի Չինպինի հետ հանդիպմանը կարևոր պայմանավորվածություններ են ձեռք բերվել երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ, ընդունվել է նախագահների համատեղ հռչակագիր, ստորագրվել են շուրջ մեկ տասնյակ փաստաթղթեր: ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը այցելել է Չինաստան, որի ընթացքում կայացել է հանդիպում ՉԺՀ պետական խորհրդի նախագահ (վարչապետ) Լի Քեցյանի հետ:

Զարգացել են հարաբերությունները **Ճապոնիայի, Հնդկաստանի, Հարավային Կորեայի, Վիետնամի, Ինդոնեզիայի** հետ:

Հունվարի 1-ից Երևանում սկսել է գործել Ճապոնիայի դեսպանությունը: Հայաստան է այցելել Ճապոնիայի արտաքին գործերի պետական նախարարը:

Հոկտեմբերին տեղի է ունեցել **Ինդոնեզիայի** առաջին պաշտոնական պատվիրակության այցելությունը Հայաստան՝ խորհրդարանի ներկայացուցիչների պալատի նախագահ Իրման Գուսմանի գլխավորությամբ:

Աշխատանքներ են տարվել **արաբական ավանդական բարեկամ պետությունների** հետ փոխգործակցության զարգացման ուղղությամբ: Օրակարգում շարունակել են առանցքային տեղ զբաղեցնել սիրիահայության անվտանգության, սիրիահայությանը օժանդակություն ցուցաբերելու, **Սիրիայի** հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերը: Միջազգային տարբեր հարթակներում Հայաստանը հետևողականորեն բարձրացրել է Մերձավոր Արևելքում ծայրահեղականների կողմից բռնությունների հետևանքով ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման խնդիրը, շեշտել դրանց պաշտպանության նպատակով և ահաբեկչության դեմ պայքարում միջազգային հանրության ջանքերը միավորելու կարևորությունը:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել **լատինամերիկյան** պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Համատեղության կարգով ՀՀ դեսպաններ են հավատարմագրվել մի շարք լատինամերիկյան երկրներում: Նոյեմբերի 25-ին ուժի մեջ է մտել Հայաստանի և **Բրազիլիայի** միջև մուտքի արտոնագրային ռեժիմը վերացնելու մասին համաձայնությունը:

Տարբեր ծրագրերի շրջանակներում շարունակվել է փոխգործակցությունը **Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ)** հետ:

Հայաստանն իր նպաստն է բերել **միջազգային խաղաղության** և անվտանգության ապահովման գործընթացին: Սեպտեմբերին Նյու Յորքում ՀՀ Նախագահը մասնակցել է՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում կայացած խաղաղապահության հարցերով գագաթաժողովին: Հայաստանը վերահաստատել է իր հանձնառությունը՝ շարունակելու մասնակցությունը **Կոսովոյում, Աֆղանստանում, Լիբանանում և Մալիում խաղաղապահ** առաքելություններին:

Հայաստանը շարունակել է ակտիվ աշխատանքները **ՄԱԿ-ի** կառույցներում: Մեծ ուշադրություն է հատկացվել **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունում, Եվրոպայի խորհրդում, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում, միջազգային և տարածաշրջանային այլ կառույցներում** ՀՀ ներգրավվածության խորացմանը:

2015թ. ընթացքում Հայաստանը հանդիսացել է **Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության** ամենաակտիվ անդամներից մեկը: Հոկտեմբերի 10-11-ին Երևանում անցկացվել է ՖՄԿ արտգործնախարարների 31-րդ համաժողովը, որին

իրենց մասնակցությունն են բերել անդամ և դիտորդ 80 երկրների և ՖՄԿ քարտուղարության շուրջ 500 ներկայացուցիչներ: Համաժողովին հաջորդել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկաել Ժանի պաշտոնական այցը Հայաստան:

Հոկտեմբերի 24-25-ը Երևանում անցկացվել է Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) շրջանավարտների 3-րդ միջազգային համաժողովը, որին իրենց մասնակցությունն են բերել 40 երկրներից Հայաստան ժամանած 400-ից ավելի շրջանավարտներ:

Ջանքեր են գործադրվել միջազգային տնտեսական կառույցների և ֆինանսական հաստատությունների հետ կապերի զարգացման, տարբեր պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, օտարերկրյա ներդրումների խրախուսման, Հայաստանի տնտեսական և զբոսաշրջային հնարավորությունների ներկայացման ուղղություններով: Նախաձեռնվել և անցկացվել են տարբեր պետությունների հետ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար ֆորումներ, հայկական արտադրանքի ցուցադրություններ:

ԱԳՆ կողմից համակողմանի աջակցություն է ցուցաբերվել տարբեր երկրների հետ միջխորհրդարանական կապերի զարգացմանը: Կարևոր տեղ է հատկացվել ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներին:

Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի միասնական արտաքին քաղաքականության վարման գործում պետական մարմինների գործունեությունը համակարգելու վերաբերյալ հրամանագրի համաձայն՝ արտաքին գործերի նախարարությունը համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը: Մեծ ուշադրություն է հատկացվել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնություններին: Կարևոր աջակցություն է ցուցաբերվել ՀՀ մշակույթի նախարարության գործունեությանը՝ ուղղված հայկական մշակույթի ներկայացմանը, արտերկրում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանմանը և տարբեր պետությունների հետ մշակութային համագործակցության հաստատմանն ու զարգացմանը:

Արտաքին քաղաքական գերատեսչության ուշադրության կենտրոնում են եղել արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության, ճգնաժամային իրավիճակներում հայտնված քաղաքացիների օժանդակության հարցերը: Տարվա ընթացքում ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 137000 քաղաքացի: Փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որոնցով կանոնակարգվել և առավել դյուրացվել են քաղաքացիներին մատուցվող

հյուպատոսական ծառայությունները: ՀՀ ԱԳՆ իրավասության շրջանակներում շարունակվել է աջակցության ցուցաբերումը սիրիահայերին, լիբանանահայերին և իրաքահայերին:

2015թ. ստորագրվել է 89 միջազգային պայմանագիր և 21 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվել 68 և ուժի մեջ է մտել 42 միջկառավարական, միջպետական և միջգերատեսչական փաստաթուղթ: ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել և ընդունվել են շուրջ 80 իրավական ակտերի նախագծեր:

2015թ. ՀՀ Նախագահին իրականացրել է 20 օտարերկրյա այց: Հայաստան է այցելել 4 պետության ղեկավար: Աժ նախագահը կատարել է 7 այցելություն, Հայաստան են ժամանել 7 երկրների խորհրդարանների նախագահներ, վարչապետի մակարդակով կայացել է 12 փոխայցելություն: ԱԳ նախարարը կատարել է 34 օտարերկրյա այց, Հայաստան է այցելել 35 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման, մեր երկրի հեղինակության ամրապնդման ուղղությամբ: Հանրապետության Նախագահը և արտաքին գործերի նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել աշխարհի հեղինակավոր լրատվամիջոցների, հրավիրել մամուլի ասուլիսներ, դասախոսություններով հանդես են եկել մի շարք հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում և համալսարաններում:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ

2015թ. ամբողջ աշխարհում նշվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ջանքերով կամ մասնակցությամբ հազարավոր միջոցառումներ են կազմակերպվել շուրջ հարյուր երկրներում:

Հայկական դիվանագիտությունը շարունակել է իր ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, հիմնախնդրի վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև՝ ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղություններով:

Հայաստանի նախաձեռնությամբ 2015թ. մարտի 27-ին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը կոնսենսուսով ընդունել է Ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը, որը վերահաստատում է, որ ցեղասպանության հանցագործության ժխտման և արդարացման փորձերը հանդիսանում են ցեղասպանության կանխարգելմանն ուղղված քայլերի լուրջ խոչընդոտ: Վերոնշյալ բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային առաջարկվել է նաև «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի ընդունման օրը՝ դեկտեմբերի 9-ը, սահմանել որպես «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր», ինչը և հաստատվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Հայաստանի նախաձեռնությամբ ընդունված բանաձևով:

Արտգործնախարարությունն իր կարևոր ներդրումն է ունեցել ապրիլի 22-23-ը Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի կազմակերպման, մասնակիցների՝ ավելի քան 50 երկրներից շուրջ հինգ հարյուր բարձրաստիճան քաղաքական գործիչների, խորհրդարանականների, հոգևորականների, գիտնականների, փորձագետների մասնակցության ապահովման և, ընդհանուր առմամբ, ֆորումի անցկացման հարցում:

Տարվա ընթացքում նոր թափ է ստացել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը՝ ներառելով ինչպես նոր պետություններ և միջազգային կառույցներ, այնպես էլ՝ տարբեր երկրների վարչատարածքային միավորներ:

Աշխարհի մեկ միլիարդից ավելի կաթոլիկների հոգևոր առաջնորդ Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ը ապրիլի 12-ին՝ Սուրբ Պետրոսի տաճարում անցկացված հատուկ արարողության ժամանակ, կարևորագույն ուղերձ է հղել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ, ինչը համաշխարհային հնչեղություն է ստացել:

Ապրիլի 15-ին 28 պետություն ներկայացնող Եվրոպական խորհրդարանն ընդունել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի վերաբերյալ հատուկ բանաձև,

որով, դատապարտելով ժխտողականությունը, կոչ է արվում Թուրքիային առերեսվել իր անցյալին, ճանաչել Հայոց ցեղասպանությունը և, այդպիսով, ճանապարհ հարթել հայ և թուրք ժողովուրդների միջև իրական հաշտության համար:

Հայտարարություններով հանդես են եկել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 40 երկիր ներկայացնող շուրջ երկու հարյուր պատգամավորներ, Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպական ժողովրդական կուսակցությունը, Եվրոպական կանաչների կուսակցությունը:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների 23 օրենսդիր մարմիններ միավորող Լատինամերիկյան խորհրդարանը:

Հոկտեմբերին Երևանում կայացած 80 պետություն ներկայացնող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության արտգործնախարարների համաժողովն ընդունել է Հայաստանի կողմից նախաձեռնված՝ «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը, որում հղում է կատարվում նույն կազմակերպության գլխավոր քարտուղար Միկաել Ժանի՝ ապրիլի 24-ի՝ Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցող և հայ ժողովրդին համերաշխություն հայտնող հայտարարությանը:

Տարբեր երկրների առաջնորդներ ու ղեկավարներ, կառավարություններ և խորհրդարաններ իրենց զորակցությունն են հայտնել հայ ժողովրդին:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջոցառումներին մասնակցել են Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը, մի քանի տասնյակ երկրների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ: Մի շարք պետությունների ղեկավարներ իրենց երկրներում մասնակցել են Մեծ Եղեռնի հիշատակի միջոցառումներին:

Հայտարարություններով հանդես են եկել Գերմանիայի նախագահը, Ավստրիայի խորհրդարանը՝ նշելով այդ ոճրագործության մեջ համապատասխանաբար Գերմանիայի և Ավստրո-Հունգարական կայսրության պատասխանատվության մասին:

Բելգիայի խորհրդարանում Բելգիայի կառավարության անունից Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել է Բելգիայի վարչապետը:

Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևեր են ընդունել Բրազիլիայի Դաշնային սենատը, Բելգիայի խորհրդարանը, Լյուքսեմբուրգի Պատգամավորների պալատը, Սան Մարինոյի օրենսդիր մարմինը, Պարագվայի Սենատը: Ռուսաստանի, Արգենտինայի, Բոլիվիայի, Չիլիի, Կանադայի, օրենսդիր մարմինները վերահաստատել են նախկինում արված իրենց հայտարարությունները: Համապատասխան բանաձև է ընդունել նաև Չեխիայի Պատգամավորների պալատի

արտաքին հարաբերությունների կոմիտեն: Կիպրոսի խորհրդարանն ընդունել է ցեղասպանության հանցագործության ժխտումը քրեականացնող բանաձև:

Ցեղասպանության հիշատակի միջոցառումները լայնորեն լուսաբանվել են աշխարհի բոլոր մայրցամաքներում հազարավոր հրապարակումներով և հաղորդումներով՝ «France 24», «CNN», «BBC», «Euronews», «Россия 24», «Russia Today», «ABC», «Al Jazeera», «Deutsche Welle», «Reuters», «RAI», «AFP», «New York Times», «Washington Post», «Le Monde», «Le Figaro», «The Independent», «The Times», «The Guardian» և առաջատար այլ լրատվամիջոցներով:

Չանգվածային լրատվամիջոցներն իրենց թողարկումներով, հոդվածներով և հարցազրույցներով հզոր տեղեկատվական և իրազեկման ալիք են բարձրացրել: Արդյունքում այն, ինչ նախաձեռնել էր Անկարան՝ նպատակ ունենալով ստվեր գցել, խոչընդոտել Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ աշխարհով մեկ կազմակերպված միջոցառումներին, բումերանգի էֆեկտ է ունեցել հենց Թուրքիայի համար՝ տապալելով նրա նախաձեռնությունները:

Թուրքական լրատվամիջոցները հանդես են եկել հարյուրավոր հրապարակումներով, ապրիլի 24-ին թուրքական ամենամեծ տարածում ունեցող պարբերականներից «Hurriyet»-ը ծավալուն հարցազրույց է հրապարակել Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ:

Միջազգային հանրային կարծիքի իրազեկման տեսանկյունից կարևոր էր քաղաքագիտական ամենահեղինակավոր հանդեսներից մեկի՝ Փարիզում հրատարակվող «Politique Internationale»-ի 330 էջանոց, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բացառիկ համարի հրապարակումը, որտեղ, ի թիվս այլ հոդվածների, տեղ են գտել ՀՀ Նախագահի, Ֆրանսիայի ներկայիս և նախկին նախագահների հրապարակումները, բազմաթիվ հեղինակավոր ցեղասպանագետների հոդվածներ:

Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հատուկ համարներ են լույս ընծայվել մի շարք հեղինակավոր միջազգային ամսագրերի և պարբերականների կողմից:

100-րդ տարելիցը դարձել է հայ ժողովրդի հավաքական հիշողության, երախտագիտության և վերածննդի խորհրդանիշ: Ցեղասպանության ճանաչման և դատապարտման միջազգային նոր ալիքը վառ վկայությունն է այն վճռականության, որով Հայաստանը առաջնորդվում է ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման կարևոր առաքելության մեջ:

2015 թվականով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը նոր լիցք է ստացել, մտել առավել համակարգված փուլ:

ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

2015թ. ընթացքում Հայաստանը շարունակել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը:

Հաշվետու տարում նոր թափ են ստացել Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի կոպտագույն խախտումները Հայաստանի և Ադրբեջանի սահմանին ու Արցախ – Ադրբեջան շփման գծում, այդ թվում նաև՝ մեծ տրամաչափի զինատեսակների կիրառմամբ, ինչը հանգեցրել է բազմաթիվ մարդկային զոհերի, ներառյալ՝ քաղաքացիական բնակչության շրջանում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հունվարի 27-ի հատուկ հայտարարությամբ Ադրբեջանին կոչ են արել հավատարիմ մնալ հիմնախնդրի խաղաղ կարգավորման իր հանձնառությանը, մտահոգություն են հայտնել բանակցային գործընթացի, Մինսկի խմբի համանախագահների դերի և ԵԱՀԿ դիտորդների գործունեության վերաբերյալ հնչեցվող քննադատության վերաբերյալ:

2015թ. մայիսի 3-ին Արցախում կայացել են խորհրդարանական ընտրություններ, որոնք դիտարկած բազմաթիվ միջազգային դիտորդներ գնահատել են դրական:

Չնայած Ադրբեջանի սպառնալիքներին՝ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ պարբերության պատճառով վետո կիրառել մայիսի 22-ին Ռիգայում կայացած ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների գագաթաժողովի Հոչակագրի նկատմամբ՝ ԵՄ անդամ 28 երկրների և Արևելյան գործընկերության 5 պետությունների ղեկավարներն ընդունված Հոչակագրում իրենց աջակցությունն են հայտնել ղարաբաղյան կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և կարևորել համանախագահող երկրների ղեկավարների կողմից արված հինգ հայտարարությունները՝ որպես հիմնահարցի հանգուցալուծման հիմք: Ի նշան բողոքի՝ Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը՝ արտգործնախարարը, լքել է գագաթաժողովը:

Սեպտեմբերի 25-ին Նյու Յորքում տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը, որի արդյունքներով հանդես գալով հայտարարությամբ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները շեշտել են հրադադարի ռեժիմի խախտումները հետաքննող մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ Հայաստանը համաձայնել է այդ առաջարկի հետ, և հորդորել են Ադրբեջանին անել նույնը:

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսը և նույն հանձնաժողովի անդամ Էլիոթ Էնգելը հանդես են եկել ԵԱՀԿ ՄԽ ամերիկյան համանախագահին ուղղված բաց նամակով, որին միացել է 83 կոնգրեսական: Նամակում նրանք իրավացիորեն ընդգծում են, որ ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև արհեստական հավասարության նշան

դնելը, անհասցե և ընդհանրական հայտարարությունները չեն կարող հանգեցնել լարվածության նվազեցմանը, հակառակը՝ նպաստում են իրավիճակի սրմանը: Կոնգրեսականները կոչ են անում՝ հետ քաշել դիպուկահարներին, ստեղծել զինադադարի խախտումները հետաքննող մեխանիզմ, ավելացնել շփման գծում ԵԱՀԿ դիտորդների քանակը:

Նոյեմբերի 9-ին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ համանախագահ երկրները՝ Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և Ֆրանսիան, կտրականապես դեմ են, որ հետևողական, գործնական, համբերատար երկխոսության փոխարեն փորձ արվի ղարաբայան հիմնախնդրի կարգավորումը տեղափոխել դրանով չբաղվող միջազգային այլ հարթակներ: Նա շեշտել է, որ եռանախագահները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման լիազորված հավաքական միջնորդ են, և ցանկացած կտրուկ, ծայրահեղ գործողություն, ում կողմից էլ դրանք ձեռնարկվեն, միայն վնասում են գործընթացին և համանախագահների աշխատանքին:

Արձագանքելով ղարաբայան հիմնախնդրի կարգավորման շուրջ քննարկումները ԵԽԽՎ և այլ ձևաչափեր տեղափոխելու Ադրբեյջանի փորձերին՝ համանախագահները նոյեմբերի 12-ին ևս մեկ անգամ հայտարարել են, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահության ձևաչափը օժտված է միջնորդության միջազգային մանդատով և վայելում է միջազգային հանրության վստահությունը: Միջնորդները շեշտել են նաև, որ կարգավորման գործընթացի ձևաչափը փոխելու կամ զուգահեռ հարթակներ տեղափոխելու փորձերը կարող են խաթարել բանակցային գործընթացը և խոչընդոտել կարգավորմանը:

Դեկտեմբերի 3-ին **Բելգրադում** ԵԱՀԿ նախարարական համաժողովի շրջանակներում արված հայտարարությունում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարները՝ Ռուսաստանի արտգործնախարարը, Միացյալ Նահանգների պետքարտուղարը և Ֆրանսիայի՝ եվրոպական հարցերով պետական քարտուղարը, կրկին շեշտել են, որ բանակցային գործընթացի հետընթացում Մինսկի խմբի համանախագահներին մեղադրելու ցանկացած փորձ նպատակ է հետապնդում քողարկել քաղաքական կամքի բացակայությունը, ինչը շարունակում է հանդիսանալ խաղաղության հասնելու գլխավոր խոչընդոտը: Եռանախագահ երկրները դատապարտել են հրադադարի շարունակական խախտումները, ծանր հրետանու կիրառումը: Նրանք շեշտել են, որ բանակցային, խաղաղ ճանապարհով հիմնախնդրի կարգավորմանն այլընտրանք չկա, և կոչ են արել կողմերին վերահաստատել միայն խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով հիմնախնդրի կարգավորման հանձնառությունը, համաձայնություն տալ հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի ստեղծմանը:

Դեկտեմբերի 19-ին Բեռնում շուրջ մեկ տարվա դադարից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի և Իլհամ Ալիևի հանդիպումը: Բանակցությունների ժամանակ քննարկվել են հակամարտության գոտում լարվածության նվազեցմանն ուղղված քայլերը և հիմնախնդրի կարգավորման առաջնական հնարավորությունները:

Արհամարհելով համանախագահների հասցեական հայտարարությունները և կոչերը՝ Բաքուն տարվա ընթացքում գնացել է նոր սադրանքների՝ ավելացնելով լարվածությունը շփման գծում և Հայաստան - Ադրբեջան սահմանին, շարունակել հիմնախնդրի կարգավորման քննարկումներն այլ հարթակներ տեղափոխելու փորձերը, համանախագահների հասցեին սուր քննադատությունը, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի և նրա թիմի լիազորությունների և նրանց գործունեության սահմանափակմանն ուղղված քայլերը, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման առաջարկության մերժումը:

Տարվա ընթացքում երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանը բազմաթիվ առիթներով վերահաստատել է իր վճռականությունը՝ շարունակելու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ համատեղ ջանքերը դարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ:

ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ՌԴ հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական գործընկերության զարգացումը շարունակել է առանցքային տեղ զբաղեցնել ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում: Երկուստեք քայլեր են ձեռնարկվել համագործակցության առավել խորացման, նոր հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ՝ հաշվի առնելով նաև 2015թ. հունվարից ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունը:

Երկկողմ և բազմակողմ ձևաչափերում ՀՀ և ՌԴ նախագահներն ունեցել են մեկ տասնյակից ավելի հանդիպումներ, որոնց արդյունքներով ձեռք են բերվել ռազմավարական նշանակություն ունեցող պայմանավորվածություններ քաղաքական, առևտրատնտեսական, ռազմատեխնիկական, էներգետիկ և հումանիտար ոլորտներում:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի միջոցառումներին մասնակցելու նպատակով ապրիլի 24-ին Հայաստան է այցելել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը: Այցի շրջանակներում կայացել է ՀՀ և ՌԴ նախագահների հանդիպումը:

Մայիսի 9-ին ՀՀ Նախագահը Մոսկվայում մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներին:

Սեպտեմբերի 7-ին ՀՀ Նախագահի՝ Մոսկվա կատարած աշխատանքային այցի շրջանակներում կայացել է Սերժ Սարգսյանի հանդիպումը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որի ընթացքում քննարկվել է երկկողմ և բազմակողմ ձևաչափերում հայ-ռուսաստանյան համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Պարբերական բնույթ են կրել հանդիպումները նաև երկու երկրների կառավարությունների ղեկավարների մակարդակով: Փետրվարի 6-ին Մոսկվայում և հոկտեմբերի 30-ին Դուշանբեում կայացել են ՀՀ վարչապետի և ՌԴ կառավարության նախագահի հանդիպումները:

Հունիսի 25-26-ը Երևանում անցկացվել է ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստը:

2015թ. ՀՀ և ՌԴ ԱԳ նախարարներն ունեցել են մեկ տասնյակից ավելի հանդիպում երկկողմ և բազմակողմ ձևաչափերում: Ապրիլի 7-8-ը կայացել է ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական այցը Ռուսաստան: Նոյեմբերի 9-ին աշխատանքային այցով Հայաստանում էր Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

Պարբերական բնույթ են կրել քաղաքական խորհրդատվություններն արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

Շարունակվել է հայ-ռուսական միջխորհրդարանական ակտիվ համագործակցությունը:

Մարտի 30-ին աշխատանքային այցով Հայաստանում էր ՌԴ Պետական դումայի նախագահ Սերգեյ Նարիշկինը: Նոյեմբերի 2-3-ը Հայաստան պաշտոնական այց է կատարել ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն:

Հունիսի 3-7-ը Յակուտսկում անցկացվել է ՀՀ Ազգային ժողովի և ՌԴ Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 26-րդ նիստը:

Շարունակական զարգացում է ապրել միջտարածաշրջանային և հումանիտար համագործակցությունը:

Նոյեմբերի 3-ին Երևանում անցկացվել է «Հայաստան-Ռուսաստան. Եվրասիական տնտեսական միություն. միջտարածաշրջանային համագործակցության նոր հեռանկարներ» խորագրով Հայ-ռուսական միջտարածաշրջանային 4-րդ համաժողովը, որի արդյունքներով ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:

Սեպտեմբերին Երևանում բացվել է Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանյան մասնաճյուղը:

Հոկտեմբերի 23-25-ը Երևանում անցկացվել է Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) շրջանավարտների 3-րդ միջազգային համաժողովը, որին իրենց մասնակցությունն են բերել 40 երկրներից Հայաստան ժամանած 400-ից ավելի շրջանավարտներ: Դեկտեմբերի 22-ին ՄԳԻՄՕ-ում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ներկա է գտնվել Լազարյան ճեմարանի 200-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացմանը:

Բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների և ապակենտրոնացված մակարդակներով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Տարվա ընթացքում շարունակել է զարգանալ հայ-ամերիկյան բարեկամական գործընկերությունը:

2015թ. ուժի մեջ է մտել մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման վերաբերյալ հայ-ամերիկյան համաձայնությունը:

Փետրվարի 18-ին Հայաստան է այցելել ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տեղակալ Վիկտորիա Նուլանդը: Նույն օրը տեղի է ունեցել նաև ԱՄՆ պաշտպանության նախարարի փոխտեղակալ Էվելին Ֆարկասի հետ հանդիպումը ՀՀ պաշտպանության նախարարի հետ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու նպատակով ապրիլի 23-24-ը Երևան է այցելել ԱՄՆ ֆինանսների քարտուղար Ջեյքոբ Լյուն՝ մի շարք կոնգրեսականների ուղեկցությամբ: Ամերիկյան պատվիրակությունը հանդիպում է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի հետ:

Մայիսի 5-7-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցն ԱՄՆ: Հանրապետության Նախագահը ներկա է գտնվել Վաշինգտոնի ազգային մայր տաճարում Հայոց ցեղասպանությանը նվիրված էկումենիկ աղոթքին, որին մասնակցել է նաև ԱՄՆ փոխնախագահ Ջոզեֆ Բայդենը: Այցի շրջանակներում՝ մայիսի 7-ին ՀՀ և ԱՄՆ միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիրը:

Սեպտեմբերի 27-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Վիկտորիա Նուլանդի հետ:

Նոյեմբերի 6-ին Էդվարդ Նալբանդյանը Փարիզում հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Էնթոնի Բլինքենի հետ:

Նոյեմբերի 17-ին Երևանում կայացել է ՀՀ և ԱՄՆ միջև առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագրով նախատեսված խորհրդի առաջին նիստը:

Նոյեմբերի 19-ին Երևանում կայացել է Տնտեսական հարցերով հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստը:

ԱՄՆ Կոնգրեսում ապրիլի 22-ին տեղի են ունեցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, իսկ դեկտեմբերի 9-ին՝ Արցախի Հանրապետության անկախությանը նվիրված միջոցառումներ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել ԵՄ հետ բազմաուղրոտ հարաբերությունների ընդլայնումը, մասնավորապես՝ Հայաստանի ու ԵՄ միջև նոր շրջանակային համաձայնագրի շուրջ քննարկումները և բանակցությունները:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մայիսին մասնակցել է Ռիգայում կայացած Արևելյան գործընկերության չորրորդ գագաթաժողովին:

Հունվարին ՀՀ ԱԳ նախարարի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում մասնակցել է ՀՀ-ԵՄ համագործակցության խորհրդի 15-րդ նիստին:

ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ապրիլին Լյուքսեմբուրգում մասնակցել է ԵՄ և Արևելյան գործընկերության արտգործնախարարների, մայիսին՝ Բրատիսլավայում կայացած Արևելյան գործընկերության և Վիշեգրադյան քառյակի ԱԳ նախարարների հանդիպումներին, հունիսին՝ Մինսկում և նոյեմբերին՝ Թբիլիսիում կայացած ԱԳ երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական հանդիպումներին:

Մարտի 17-18-ը Երևանում կայացել է Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի լիազումար նիստը, ինչպես նաև՝ ՀՀ-ԵՄ խորհրդարանական համագործակցության կոմիտեի նիստը:

Տարվա ընթացքում Հայաստան են այցելել Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատար Յոհանես Հանը (մարտի 18), Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը (հուլիսի 20), Եվրոպական խորհրդարանի փոխնախագահ, Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ Ռիչարդ Չարնեցկին (ապրիլի 22-24, հոկտեմբերի 16):

Հոկտեմբերի 13-ին Լյուքսեմբուրգում ԵՄ խորհրդի որոշմամբ հաստատվել է ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու մանդատը, իսկ դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Եվրոպական միության միասնական արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին պաշտոնապես ազդարարել են ՀՀ-ԵՄ երկկողմ

հարաբերությունների նոր իրավական համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը:

Դեկտեմբերի 9-ին ՀՀ պատվիրակությունը Բրյուսելում մասնակցել է Հայաստան-ԵՄ Շարժունակության շուրջ գործընկերության բարձրաստիճան հանդիպմանը:

Հաշվետու տարում նախաստորագրվել է ԵՄ հետազոտությունների և նորարարության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագիրը, ինչպես նաև ստորագրվել է Եվրոպական հանձնաժողովի՝ Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակության «COSME» ծրագրին Հայաստանի անդամակցության վերաբերյալ համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերի 29-ից: Եվրոպական կողմի հետ ստորագրվել են նաև «Աջակցություն Հայաստանի ՓՄՁ ոլորտի զարգացմանը» և «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» աջակցության համաձայնագրերը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Եվրոպական պետությունների երկկողմ հարաբերությունների զարգացման առումով ևս տարին նշանավորվել է մի շարք կարևոր իրադարձություններով:

Հաշվետու տարում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Իտալական Հանրապետություն, աշխատանքային այցելություններ՝ Ֆրանսիական Հանրապետություն:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Սուրբ Աթոռ՝ մասնակցելու Հռոմի Պապ Ֆրանցիսկոս I-ի կողմից Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մատուցված պատարագին:

ՀՀ Նախագահը աշխատանքային այց է կատարել նաև Միացյալ Թագավորություն՝ Վեսթմինսթերի արքայությունում կայացած Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին նվիրված ոգեկոչման արարողությանը մասնակցելու նպատակով:

Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումները Լատվիայի նախագահ Անդրիս Բերզինշի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Իտալիայի վարչապետ Մատեո Ռենցիի և Շվեդիայի վարչապետ Ստեֆան Լյովենի հետ:

ՀՀ վարչապետը պաշտոնական այց է կատարել Չեխիայի Հանրապետություն, ինչպես նաև աշխատանքային այց Ֆրանսիական Հանրապետություն:

Փոխադարձ այցելությունների, միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Բուլղարիայի, Էստոնիայի, Խորվաթիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Չեխիայի, Ռումինիայի, Սերբիայի,

Սլովակիայի, Ֆինլանդիայի, Իսպանիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հետ:

Հայաստան են այցելել մի շարք եվրոպական երկրների արտգործնախարարներ և պետքարտուղարներ, այդ թվում՝ Բելգիայի Թագավարության փոխվարչապետ, արտաքին և եվրոպական գործերի նախարար Դիդյե Ռեյնդերսը, Լատվիայի ԱԳ նախարար Էդգարս Ռինկևիչը, Անդորրայի արտգործնախարար Ժիլբերտ Սաբոյա Սունյին, Սերբիայի փոխվարչապետ և արտգործնախարար Իվիցա Դաշիչը և Չեխիայի արտաքին գործերի նախարար Լյուբոմիր Ջաորալեկը, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Հարլեմ Դեզիրը, ԳԴՀ պետնախարար Միխայել Ռոթը, Ռումինիայի ԱԳ պետքարտուղար Կարմեն Բուրլաշուն:

2015թ. կայացել է ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի այցը Կիպրոս: Հայաստան են այցելել Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Յանակիս Օմիրուն, Չեխիայի Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկը:

2015թ. տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական և աշխատանքային այցերը Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Միացյալ Թագավորություն, Սլովենիա, Ֆրանսիա:

Տեղի են ունեցել միջխորհրդարանական պատվիրակությունների բազմաթիվ փոխայցելություններ. հայկական խորհրդարանական պատվիրակություններն այցելել են Գերմանիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Հունաստան, Չեխիա, Ֆրանսիա, իսկ Հայաստան են այցելել Ավստրիայի, Բելգիայի, Գերմանիայի, Նիդերլանդների, Չեխիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի խորհրդարանական պատվիրակությունները:

Տեղի են ունեցել քաղաքական խորհրդատվություններ Հայաստանի և Գերմանիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Լիտվայի, Ֆինլանդիայի ԱԳՆ-ների միջև:

Հաշվետու տարում Սոֆիայում գումարվել է Առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստը, իսկ Վիլնյուսում՝ Առևտրատնտեսական համագործակցության հայ-լիտվական միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստը, ինչպես նաև կայացել են հայ-բելգիական, հայ-լեհական, հայ-լիտվական, հայ-չեխական գործարար համաժողովներ:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐ

Վրաստան

Հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները շարունակել են զարգանալ և ամրապնդվել ամենատարբեր ոլորտներում: Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել տարբեր մակարդակների շուրջ երեք տասնյակ փոխայցելություններ և հանդիպումներ:

Հոկտեմբերի 30-31-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի երկօրյա աշխատանքային այցը Վրաստան, որի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Վրաստանի նախագահի, վարչապետի և խորհրդարանի նախագահի հետ:

Հոկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի և «Վրացական երազանք» շարժման առաջնորդ Բիծինա Իվանիշվիլիի ներկայությամբ տեղի է ունեցել Թբիլիսիի հնագույն հայկական եկեղեցիներից մեկի՝ Սբ. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու վերածման արարողությունը:

Փետրվարի 16-ին պաշտոնական այցով Երևան է ժամանել Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլին:

Մայիսի 17-ին՝ Բաթում, հուլիսի 25-ին՝ Թբիլիսի է այցելել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Սեպտեմբերի 27-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում և նոյեմբերի 26-ին Թբիլիսիում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլիի հետ:

2015թ. Վրաստան են այցելել ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, ՀՀ գյուղատնտեսության նախարարը, ՀՀ էկոնոմիկայի նախարարը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը, ՀՀ գլխավոր դատախազը, ՀՀ ոստիկանապետը: Վրացական կողմից տեղի են ունեցել արդարադատության նախարարի, Վրաստանի պրոբացիայի և իրավական օգնության նախարարի, Վրաստանի գյուղատնտեսության նախարարի, Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարի և Վրաստանի կրոնի հարցերով պետական գործակալության նախագահի այցերը Հայաստան:

Իրան

Հաշվետու ժամանակահատվածում շարունակել է զարգացում ապրել հայ-իրանական փոխշահավետ գործակցությունը:

Հունվարի 26-27-ը տեղի է ունեցել Իրանի ԱԳ նախարար Մոհամմադ Ջավադ Ջարիֆի պաշտոնական այցելությունը Երևան:

Սեպտեմբերի 27-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարարի հետ:

Հոկտեմբերի 14-15-ը ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հրավերով տեղի է ունեցել ԻԻՀ նախագահի առաջին տեղակալ Էսհադ Ջահանգիրիի պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ Նախագահի, ԱԺ նախագահի և վարչապետի հետ:

Հոկտեմբերին՝ Երևանում, նոյեմբերին՝ Թեհրանում կայացել են հայ-իրանական գործարար համաժողովներ:

Տարվա ընթացքում նաև տեղի են ունեցել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, առողջապահության և էկոնոմիկայի նախարարների այցելությունները Իրան:

Երևան են այցելել ԻԻՀ արդարադատության նախարարը, էներգետիկայի նախարարը, մշակույթի նախարարը:

Տարվա ընթացքում Երևանում փոխնախարարների մակարդակով քաղաքական խորհրդատվություններ են տեղի ունեցել երկու երկրների ԱԳՆ-ների միջև: Երևան է այցելել Իրանի մեջլիսի պատվիրակությունը:

Թուրքիա

Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշման պատճառով հայ-թուրքական հարաբերություններում որևէ դրական տեղաշարժ չի գրանցվել:

Տարվա ընթացքում միջազգային հանրությունը շարունակել է իր աջակցությունը հայտնել հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման հայկական կողմի սկզբունքային դիրքորոշմանը:

Թուրքիայի նախագահը չի պատասխանել Հայաստանի կողմից Թուրքիային ուղղված ևս մեկ բարի կամքի դրսևորմանը՝ դեռևս 2014թ. օգոստոսին իրեն փոխանցված ՀՀ Նախագահի նամակին՝ 2015թ. ապրիլի 24-ին այցելելու Երևան՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին միասին հարգանքի տուրք մատուցելու համար:

Փետրվարի 16-ին Նախագահ Սարգսյանը խորհրդարանից հետ է կանչել 2009թ. ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները:

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հունվարից Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ և իր ակտիվ մասնակցությունը բերեց կազմակերպության կայացման գործընթացին:

Մայիսի 8-ին Մոսկվայում, հոկտեմբերի 16-ին Բուրաքայում և դեկտեմբերի 21-ին կրկին Մոսկվայում կայացել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերը՝ նախագահների մակարդակով, իսկ փետրվարի 6-ին Մոսկվայում, մայիսի 29-ին Բուրաքայում (Ղազախստան) և սեպտեմբերի 8-ին Գրոդնոյում (Բելառուս)՝ միության անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների մակարդակով նիստերը:

Տարվա ընթացքում ԵՏՀ խորհրդի թվով տասը նիստեր են կայացել ՀՀ փոխվարչապետի մասնակցությամբ:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հոկտեմբերի 16-ի որոշմամբ 2016թ. փետրվարի 1-ից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահությունը 4 տարի ժամկետով կստանձնի ՀՀ ներկայացուցիչ Տիգրան Սարգսյանը:

ԱՊՀ

Համագործակցությունն ԱՊՀ շրջանակներում 2015թ. ընթացքում շարունակել է մնալ ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Հայաստանն իր ակտիվ գործնական մասնակցությունն է ունեցել ԱՊՀ կառույցում ծավալվող գործընթացներում:

Հոկտեմբերի 16-ին Բուրաքայում կայացել է ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստը՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, մայիսի 29-ին Բուրաքայում և հոկտեմբերի 30-ին Դուշանբեում ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերը՝ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ, ապրիլի 4-ին Բիշքեկում և հոկտեմբերի 15-ին Աստանայում ԱՊՀ մասնակից պետությունների արտգործնախարարների խորհրդի նիստերը՝ ՀՀ արտգործնախարարի մասնակցությամբ:

ՀՀ փոխվարչապետի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ տնտեսական խորհրդի 65-68-րդ հերթական նիստերին:

Տարվա ընթացքում Հայաստանում անցկացվել են ԱՊՀ ճյուղային մարմինների մի շարք միջոցառումներ:

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐ

Տարվա ընթացքում քայլեր են ձեռնարկվել **Բելառուսի** հետ համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ:

Հունիսի 29-ին Մինսկում կայացել է հայ-բելառուսական հանձնաժողովի 9-րդ նիստը:

Նոյեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը հանդիպում է ունեցել ԲՀ ԱԺ Ներկայացուցիչների պալատի նախագահ Վլադիմիր Անդրեյչենկոյի հետ:

Մայիսի 29-ին Բուրաբայում կայացել է Հայաստանի և Բելառուսի վարչապետների հանդիպումը:

Օգոստոսի 27-29-ը Երևանում կայացել է գիտատեխնիկական համագործակցության հայ-բելառուսական հանձնաժողովի երկրորդ նիստը:

Հայաստանի կողմից քայլեր են ձեռնարկվել **Ուկրաինայի** հետ հարաբերությունների հետագա զարգացումն ապահովելու ուղղությամբ:

Հունիսի 17-ին Քիշնևում կայացել են Հայաստանի և **Մոլդովայի** արտգործնախարարությունների միջև խորհրդատվություններ:

Դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանն այցելել է **Թուրքմենստան**, մասնակցել և ելույթ է ունեցել Աշխաբադում կայացած «Չեզոքության քաղաքականությունը. միջազգային համագործակցությունը հանուն խաղաղության, անվտանգության ու զարգացման» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովին, հանդիպումներ է ունեցել Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի և խորհրդարանի նախագահ Ակջա Նուրբերդիևայի հետ:

Նոյեմբերի 10-ին Աշխաբադում կայացել է ՀՀ և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստը:

Նոյեմբերի 11-ին Աշխաբադում կայացել են խորհրդատվություններ Հայաստանի և Թուրքմենստանի ԱԳ նախարարությունների միջև:

Մարտի 24-30-ը Հայաստանում անց են կացվել Թուրքմենստանի մշակույթի օրերը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 15-ին աշխատանքային այց է կատարել **Ղազախստան**՝ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերին մասնակցելու նպատակով:

Մայիսի 20-ին Երևանում կայացել է հայ-ղազախական գործարար համաժողով:

Ապրիլի 3-4-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնական այցը **Ղրղզստան**, որի ընթացքում հանդիպումներ են կայացել երկրի նախագահի, վարչապետի և ԱԳ նախարարի հետ:

Մայիսի 29-ին (Աստանայում) կայացել է Հայաստանի և Ղրղզստանի վարչապետների հանդիպումը:

Սեպտեմբերի 14-ին (Դուշանբեում) կայացել է ՀՀ և Ղրղզստանի ԱԳ նախարարների հանդիպումը:

Սեպտեմբերի 14-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այց է կատարել **Տաջիկստան**, հանդիպում ունեցել նախագահ Էմոմալի Ռահմոնի հետ:

Հոկտեմբերի 30-ին կայացել է ՀՀ և Տաջիկստանի վարչապետների հանդիպումը:

Ապրիլի 2-ին Դուշանբեում տեղի է ունեցել Հայաստանի և Տաջիկստանի ԱԳ նախարարների հանդիպումը:

ԱՍԻԱ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՖՐԻԿԱ

Հայաստանը շարունակել է զարգացնել հարաբերությունները Ասիա-Խաղաղովկիանոսյան տարածաշրջանի պետությունների հետ:

Մարտի 24-28-ը կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պետական այցը **Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ՉԺՀ)**: Այցի ընթացքում Հանրապետության ղեկավարը հանդիպել է ՉԺՀ նախագահ Սի Շինփինի, Համաչինական ժողովի մշտական կոմիտեի նախագահ Ճանգ Դընյանի, Պետական խորհրդի նախագահ (վարչապետ) Լի Քեցյանի հետ, ելույթ է ունեցել Պեկինի համալսարանում: Այցի շրջանակներում ստորագրվել են ՀՀ և ՉԺՀ նախագահների Համատեղ հռչակագիրը, մեկ տասնյակից ավելի փաստաթղթեր:

Սեպտեմբերի 22-24-ը աշխատանքային այցով Չինաստանում է գտնվել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ով հանդիպել է Չինաստանի Պետական խորհրդի նախագահ (վարչապետ) Լի Քեցյանի հետ:

Փոխայցելություններ են կայացել միջխորհրդարանական ձևաչափով: Հայաստան է այցելել Չինաստանի Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի մշտական կոմիտեի նախագահի տեղակալ Ճեն Չանջիի գլխավորած պատվիրակությունը:

Դեկտեմբերին Պեկինում կայացել է հայ-չինական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի հերթական՝ 8-րդ նիստը:

Չինաստանի կառավարությունը շարունակել է Հայաստանին տրամադրվող տեխնիկատնտեսական օժանդակության ծրագրերի իրականացումը:

2014թ. ստորագրված համաձայնագրով անցյալ տարի Հայաստանի հանրային հեռուստատեսության տեխնիկական վերազինման համար տրամադրվել են շարժական ստուդիա և հեռուստահաղորդումների կառավարման սարքավորումներ:

2015թ. մարտին ստորագրված համաձայնագրով Հայաստանին կտրամադրվի ևս 60 մլն յուանի (շուրջ 10 մլն ԱՄՆ դոլար) օժանդակություն՝ Երևանում չինարենի խորացված ուսուցման դպրոցի կառուցման նպատակով:

Հուլիսին Չինաստանում անցկացվել են Հայաստանի մշակույթի օրեր:

Մարտին Պեկինում քաղաքական խորհրդատվություններ են անցկացվել Հայաստանի և Չինաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև:

Հունվարի 1-ից Երևանում սկսել է գործել **Ճապոնիայի** դեսպանությունը: Հունվարի 22-ին Հայաստան է այցելել Ճապոնիայի արտաքին գործերի պետական նախարար Մինորու Կիուչին:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կայացել են Հայկական մշակույթի օրեր:

Հուլիսին Երևան է այցելել **Կորեայի Հանրապետության** խորհրդարանական պատվիրակությունը:

Հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել **Ինդոնեզիայի** առաջին պաշտոնական պատվիրակության այցելությունը Հայաստան՝ խորհրդարանի տարածաշրջանային ներկայացուցիչների պալատի նախագահ Իրման Գուսմանի գլխավորությամբ:

Հոկտեմբերի 24-ին Հայաստան է այցելել **Վիետնամի** արդարադատության նախարար Հա Հունգ Կուոնը: Այցի շրջանակներում Հայաստանի և Վիետնամի արդարադատության նախարարությունների միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Հոկտեմբերին Երևանում քաղաքական խորհրդատվություններ են անցկացվել Հայաստանի և Վիետնամի արտգործնախարարությունների միջև:

Ապրիլին **Նեպալում** տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման համար ՀՀ կառավարությունը հատկացրել է 50 հազար ԱՄՆ դոլար:

Հոկտեմբերին Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարական համաժողովի շրջանակներում Հայաստան են այցելել Մադագասկարի, Նիգերի, Կոնգոյի, Մավրիկիոսի, Կոմորյան կղզիների, Զիբուֆիի, Բենինի, Բուրունդիի, Բուրկինա Ֆասոյի, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, Տոգոյի, Սենեգալի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները: **Սենեգալի, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, Մադագասկարի, Կոմորյան կղզիների, Տոգոյի և Կոտ դ'Իվուարի** հետ ստորագրվել է հարաբերությունների զարգացմանը միտված յոթ փաստաթուղթ:

Փետրվարին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Եթովպիայի արտգործնախարար Թեդրոս Ադիանոմ Ղեբրեյեուսին:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հետ ստորագրվել է դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրություն:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Քայլեր են ձեռնարկվել արաբական երկրների հետ ավանդական բարեկամական հարաբերությունների պահպանման և զարգացման ուղղությամբ:

Միջազգային տարբեր հարթակներում, երկկողմ հանդիպումների ընթացքում Հայաստանը հետևողականորեն բարձրացրել է Մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Սիրիայում և Իրաքում, ծայրահեղականների կողմից բռնությունների հետևանքով ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման հարցը, դրանց պաշտպանության նպատակով միջազգային հանրության ջանքերը միավորելու կարևորությունը:

Շարունակվել են շփումներն Արաբական լիգայի կենտրոնական գրասենյակի հետ: Կահիրեում ՀՀ դեսպանը ներկա է գտնվել Արաբական լիգայի ընդլայնված նիստերին:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել սիրիահայության անվտանգության, հայ համայնքի բնականոն կենսագործունեության ապահովման և պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Մայիսի 27-28-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն այցելել է **Սիրիա** և հանդիպումներ ունեցել նախագահ Բաշար ալ-Ասադի, Ժողովրդական ժողովի նախագահ Մոհամմադ Ջիհադ ալ-Լահամի, փոխվարչապետ, ԱԳ նախարար Վալիդ ալ-Մուալլեմի, սիրիահայ համայնքի կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

Մայիսի 26-27-ը ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական այց է կատարել **Լիբանան**: Այցի ընթացքում նախարարը հանդիպումներ է ունեցել Լիբանանի վարչապետ Թամամ Սալամի, խորհրդարանի նախագահ Նաբիի Բըրրիի, ԱԳ և էմիրանտների նախարար Ջեբրան Բասիլի, ինչպես նաև՝ հայ համայնքի կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

Ապրիլի 11-14-ը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը պաշտոնական այց է կատարել Լիբանան, որի ընթացքում ստորագրվել են 2015թ. և 2016թ. ռազմական համագործակցության մասին ծրագրերը: Շարունակվել է հայ խաղաղապահների մասնակցությունը Լիբանանում իրականացվող խաղաղապահ առաքելությանը:

Մայիսի 9-ին Մոսկվայում կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի և **Եգիպտոսի** Արաբական Հանրապետության նախագահ Աբդել Ֆաթթահ էլ-Սիսիի հանդիպումը: Մարտի 12-14-ը ՀՀ վարչապետ Հովհիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Շարմ էլ Շեյխում տեղի ունեցած «Աջակցություն Եգիպտոսին» միջազգային ֆորումին, որի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի հանդիպումը ԵԱՀ նախագահ Աբդել Ֆաթթահ էլ-Սիսիի հետ:

Երկամյա ընդմիջումից հետո իր գործունեությունն է վերսկսել Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը:

Փետրվարի 6-ին Մյունխենում՝ Անվտանգության ֆորումի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ԵԱՀ ԱԳ նախարար Սամեհ Շուքրիի հետ:

Փետրվարի 7-ին Մյունխենում կայացել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը **Քաթարի** ԱԳ նախարար Խալիդ բին Մոհամեդ Ալ Աթիյահի հետ:

Սեպտեմբերի 26-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպել է **Իրաքի** ԱԳ նախարար Իբրահիմ ալ-Ջաաֆարիին:

Փետրվարին կայացել է Իրաքի տրանսպորտի նախարարի այցը Հայաստան:

Փետրվարին Մյունխենում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Իրաքյան Քրդստանի նախագահ Մասուդ Բարզանիին:

Հուլիսին Հայաստան է այցելել Իրաքի Քրդստանիինքնավար տարածաշրջանի պլանավորման նախարարը:

Հունիսի 30-ից հուլիսի 2-ը Հայաստան է այցելել **Հորդանանի** բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների նախարարը: Այցի ընթացքում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կայացել են Հայկական մշակույթի օրեր կրթության, գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության վերաբերյալ: Հոկտեմբերին Երևանում տեղի են ունեցել Հորդանանի մշակութային օրեր:

Մարտի 4-6-ը **Իսրայել** է այցելել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, ով հանդիպում է ունեցել Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինի հետ: ԱԳ նախարարը նաև ներկա է գտնվել Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված համերգին:

Հայաստանի և Իսրայելի միջև տեղի են ունեցել խորհրդարանական փոխայցելություններ:

Մարտի 11-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Հովհիկ Աբրահամյանի այցը **Քուվեյթ**, որի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետի հանդիպումը Քուվեյթի էմիր

Սարահ Ալ-Ահմադ Ալ-Ջաբեր Ալ-Սաբահիի հետ, ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:

Դեկտեմբերի 15-17-ը Քուվեյթում կայացել է հայ-քուվեյթական միջկառավարական հանձնաժողովի երկրորդ նիստը:

Փետրվարին Հայաստանում սկսել է գործել **Արաբական Միացյալ Էմիրությունների** դեսպանությունը:

Ապրիլին Երևանում անցկացվել է Հայաստան-Մարոկկո գործարար համաժողով:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Մարտին տեղի է ունեցել **Կանադայի** գործարարների ներկայացուցչական պատվիրակության այցելությունը Հայաստան, որի շրջանակներում կայացել է գործարար համաժողով:

Ապրիլին Երևան է այցելել Կանադայի ներգաղթի և քաղաքացիության նախարար Քրիս Ալեքսանդրը:

Տեղի են ունեցել փոխայցելություններ խորհրդարանական ձևաչափով:

Մայիսին կայացել է ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակության այցը Կանադա:

Հոկտեմբերի 10-11-ը աշխատանքային այցելությամբ Հայաստանում էր գտնվում Կանադայի միջազգային զարգացման և ֆրանկոֆոնիայի հարցերով նախարար Քրիստիան Պարադին: Նույն ժամանակ Հայաստան է այցելել նաև Քվեբեք նահանգի ԱԳ և ֆրանկոֆոնիայի հարցերով նախարար Քրիստին Սեն-Պիեռը:

Ապրիլի 23-25-ին Երևան աշխատանքային այց են կատարել **Արգենտինայի** ԱԳ նախարար Հեկտոր Թիմերմանը, խորհրդարանի առաջին փոխխոսնակ Նորմա դե Մատարասոն:

Նոյեմբերից ուժի մեջ է մտել Հայաստանի և **Բրազիլիայի** միջև մուտքի արտոնագրային ռեժիմը վերացնելու մասին համաձայնությունը:

Ապրիլին **Ուրուգվայի** ԱԳ նախարարի տեղակալ Խոսե Լուիս Կանսելան աշխատանքային այց է կատարել Հայաստան:

Չիլիի Ազգային կոնգրեսի Պատգամավորների պալատի փոխխոսնակ Դենիզ Պասկալ Այենդեն ապրիլին այցելել է Հայաստան:

Մայիսի 22-ին Հայաստան է այցելել **Մեքսիկայի** Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գաբրիելա Կուելաս Բառոնը:

Հոկտեմբերին Երևան է այցելել Մեքսիկայի հատուկ բանագնաց դեսպան Խուան Գոմես Ռոբլեդոն:

Մարտի 13-ին Հայաստան է այցելել **Նիկարագուայի** ԱԳ նախարարի տեղակալ, նախագահի խորհրդական Լուիս Ալբերտո Մոլինան:

Հոկտեմբերին Երևանում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել **Հահիթի** ԱԳ նախարար Լենե Ռենոյի հետ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորված ազգերի կազմակերպություն

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 28-29-ը Նյու Յորքում մասնակցել և ելույթ է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանին:

Նոյեմբերի 30-ին Փարիզում ՀՀ Նախագահը մասնակցել և ելույթ է ունեցել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխությանը նվիրված COP21 գագաթաժողովին:

Հաշվետու տարին առանձնացել է ՄԱԿ-ի հետ համագործակցության տարբեր ոլորտները կանոնակարգող մի շարք փաստաթղթերի մշակմամբ և ընդունմամբ՝ Հայաստան - ՄԱԿ զարգացման օժանդակության շրջանակային փաստաթուղթը 2016-2020թթ. համար, փոխգործակցության հնգամյա փաստաթղթեր և գործողությունների ծրագրեր ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմադրամի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գրասենյակի հետ:

Հունվարի 22-ին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկում (ՀՊԴ) ընթացակարգի շրջանակում տեղի է ունեցել ՀՀ երկրորդ զեկույցի քննարկումը, իսկ հունիսին ընդունվել է վերջնական փաստաթուղթը:

Մարտի 2-ին ժնկում ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 28-րդ նստաշրջանի շրջանակներում Հայաստանը՝ Ռուսաստանի Դաշնության, Լիբանանի և Վատիկանի հետ համատեղ, նախաձեռնել է «Աջակցություն Մերձավոր Արևելքում քրիստոնյաների իրավունքներին» խորագրով քննարկումը, որին մասնակցել և ելույթ է ունեցել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

Ապրիլի 8-ին՝ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի նստաշրջանում, Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի ծրագրի Գործադիր կոմիտեի անդամ:

Նախապատրաստվել է կանանց իրավունքներին վերաբերող Պեկինյան հռչակագրի և գործողությունների ծրագրի 20-ամյակին (Պեկին+20) նվիրված Հայաստանի ազգային զեկույցը, որը ներկայացվել է Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 59-րդ նստաշրջանում:

Հայաստանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (UN ESCAP) մայիսի 25-29-ը Բանգկոկում կայացած՝ կազմակերպության 71-րդ նստաշրջանին:

Սեպտեմբերի 27-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական զարգացման հարցերով տեղակալ, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով (UN ESCAP) ՄԱԿ-ի հանձնաժողովի գործադիր քարտուղար Շամշադ Ախտարի հետ:

ՅՈՒՆԵՍԿՕ

Նոյեմբերի 5-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է ելույթ է ունեցել Փարիզում տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի 38-րդ նստաշրջանին:

Մայիսին Հայաստանը դարձել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Արևմտյան և Կենտրոնական Ասիայի ոչ նյութական մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոնի անդամ, «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելմանը և կանխմանն ուղղված միջոցառումների մասին» կոնվենցիայի կոմիտեի անդամ:

Հունիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայացած «Երիտասարդությունը հանուն խաղաղության» երգափակիչ համերգին մասնակցող ՀՀ պատվիրակությունը՝ Նախագահի աշխատակազմի ղեկավարը, մշակույթի, կրթության և գիտության նախարարները հանդիպել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի հետ:

Հուլիսի 10-14-ը Երևանում կայացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային հանձնաժողովի և ՀՀ մշակույթի նախարարության համատեղ ջանքերով իրականացված «Մշակութային քաղաքականություն. քաղաքականություն մշակույթի համար: Մշակույթի դերը կայուն զարգացման գործում 2015թ. հետո» խորագրով 3-րդ միջազգային համաժողովը, որի արդյունքում ընդունվել է Երևանյան հռչակագիրը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2016-2017թթ. օրացույցի մեջ են ընդգրկվել Ոսկան Երևանցու տպագրությամբ հայերեն առաջին Աստվածաշնչի (1666թ.) 350-ամյակը և Հովհաննես Այվազովսկու (1817-1900թթ.) ծննդյան 200-ամյակը:

ԵԱՀԿ

Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը ԵԱՀԿ շրջանակներում իրականացվող համագործակցությանը՝ կազմակերպության գործունեության բոլոր երեք հարթություններում:

Մի շարք հանդիպումներ են կայացել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և ԵԱՀԿ գործող նախագահ, Սերբիայի փոխվարչապետ և արտգործնախարար Իվիցա Դաշիչի հետ, ինչպես նաև՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերի հետ:

Մարտի 11-ին ՀՀ արտաքին գործերի նախարարը ելույթ է ունեցել ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում՝ ներկայացնելով կազմակերպության օրակարգային հարցերի, ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ ՀՀ մոտեցումները, անդրադարձել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին և դրանց խորհրդին:

Հունիսի 3-ին ԵԱՀԿ գործող նախագահ, Սերբիայի փոխվարչապետ և արտգործնախարար Իվիցա Դաշիչն այցելել է Հայաստան, հանդիպումներ ունեցել ՀՀ Նախագահի, ԱԺ նախագահի և արտգործնախարարի հետ:

Հոկտեմբերի 1-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի կենտրոնակայանում մասնակցել և ելույթ է ունեցել «ԵԱՀԿ խաղաղությանն ուղղված գործուղությունները» խորագրով նախարարական հանդիպմանը:

Դեկտեմբերի 3-ին ՀՀ ԱԳ նախարարը ելույթով հանդես է եկել ԵԱՀԿ Բելգրադի նախարարական խորհրդի նիստում:

ՀՀ պատվիրակությունն ակտիվորեն ներգրավված է եղել Բելգրադի նախարարական խորհրդի փաստաթղթերի ընդունման գործընթացին: Ահաբեկչության, Մերձավոր Արևելքում գործող ահաբեկչական խմբավորումների դեմ պայքարի վերաբերյալ հռչակագրում ամրագրվել են նաև ՀՀ առաջարկները՝ կրոնական սրբավայրերի և համաշխարհային մշակութային ժառանգության ոչնչացման դատապարտման, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

ԵԱՀԿ Մշտական խորհրդում Հայաստանը շարունակաբար բարձրաձայնել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում և Հայաստան-Ադրբեջան սահմանին հրադադարի կոպտագույն խախտումների մասին, շեշտել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջարկվող՝ միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը:

Արտգործնախարարությունը համակարգել է ՀՀ գերատեսչությունների և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի միջև համագործակցությունը՝ անվտանգության, տնտեսության, բնապահպանության, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման ոլորտներում:

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

Տարին նշանավորվել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում Հայաստանի կողմից նախագահության ստանձնմամբ՝ ՀՀ Նախագահի մասնակցությամբ սեպտեմբերի 15-ին Դուշանբեում տեղի ունեցած Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին: Հանրապետության Նախագահը ներկայացրել է ՀՀ նախագահության առաջնայնությունները՝ ուղղված կազմակերպության արդյունավետության բարձրացմանը:

Կառույցում Հայաստանի նախագահության շրջանակներում սեպտեմբերին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի ԳԱ 70-րդ նստաշրջանի, իսկ դեկտեմբերին Բելգրադում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի ընթացքում, տեղի են ունեցել ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների հանդիպումները՝ նվիրված արտաքին քաղաքականության համադրման հարցերին:

Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը Հայաստանում անցկացվել են ՀԱՊԿ խաղաղապահ ստորաբաժանումների «Անխախտ եղբայրություն 2015» գորավարժությունները:

Ապրիլին, սեպտեմբերին և դեկտեմբերին Հայաստանը մասնակցել է ՀԱՊԿ արտաքին գործերի և պաշտպանության նախարարների խորհուրդների ու անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստերին, որոնց ընթացքում ընդունվել են մի շարք փաստաթղթեր:

Դեկտեմբերի 21-ին Մոսկվայում կայացել է ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստը, որին մասնակցել և ելույթ է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Դեկտեմբերի 21-ին Մոսկվայում կայացած Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանին որոշում է կայացվել, որ 2017թ. հունվարի 1-ից ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնը կստանձնի ՀՀ ներկայացուցիչը:

ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժան չորս այց է կատարել Հայաստան, հանդիպումներ ունեցել երկրի ղեկավարության հետ:

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

Անհատական գործընկերության գործողությունների (ԱԳԳԾ) և այլ ծրագրերի շրջանակներում շարունակվել է փոխգործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) հետ:

Հունվարի 14-16-ը Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայը:

ՀՀ Ազգային ժողովի հրավերով հունիսի 18-20-ը Երևանում անցկացվել է «Անվտանգությունն ու կայունությունը Հարավային Կովկասում. տնական խաղաղության խթանումը տարածաշրջանում» խորագրով ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի Ռոզ-Ռոթ 89-րդ սեմինարը, որին որպես հիմնական բանախոսներ ելույթ են ունեցել ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարները:

Դեկտեմբերի 1-ին ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, մասնակցել և ելույթ է ունեցել Աֆղանստանում «Հաստատական աջակցություն» առաքելության մասնակից ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր պետությունների ԱԳ նախարարների հանդիպմանը:

Դեկտեմբերի 10-ին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի գործընկերության և համագործակցային անվտանգության կոմիտե + Հայաստան ձևաչափով նիստը՝ ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2014-2015թթ. գնահատման զեկույցը քննարկելու նպատակով:

Նոյեմբերի 2-6-ը Հայաստանում անցկացվել է հերթական՝ «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումը:

ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2015թ. Հայաստանը շարունակել է իր նպաստը բերել միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործընթացներում:

Սեպտեմբերի 28-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը Նյու Յորքում մասնակցել և ելույթ է ունեցել Խաղաղապահության գագաթաժողովին:

Հայաստանը վերահաստատել է իր հանձնառությունը՝ 2016թ. շարունակելու մասնակցությունը Աֆղանստանում «Հաստատական աջակցություն» և Կոսովոյում իրականացվող առաքելություններին:

Հայ խաղաղապահները շարունակել են մասնակցել Լիբանանում ՄԱԿ-ի՝ UNIFIL խաղաղապահ առաքելությանը:

2015 թվականից Հայաստանը մասնակցում է ՄԱԿ-ի հովանու ներքո Մալիում իրականացվող խաղաղապահ դիտորդական առաքելությանը:

Փետրվարի 5-7-ը ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Մյունխենյան անվտանգության համաժողովին:

Հոկտեմբերին Երևան է այցելել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի խաղաղապահ գործողությունների հարցերով օգնական Էդմոն Մյուլեն, ով հանդիպում է ունեցել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Փետրվարի 17-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Աշոտ Հովակիմյանը մասնակցել է Ամստերդամում կայացած «Խաղաղության և պաշտպանության ապահովում. ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների միատեղման զորությունը» միջազգային համաժողովին:

Հոկտեմբերի 5-6-ը Երևանում տեղի է ունեցել խաղաղապահության հիմնախնդիրներին նվիրված միջազգային համաժողով:

ԳԼՈՒԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Փետրվարի 5-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ՄԱԿ ԱԽ Զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարի 1540 բանաձևի իրականացման 2015-2020թթ. ՀՀ ազգային գործողությունների ծրագիրը:

Շարունակվել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ համագործակցությունը և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների աշխատանքի համակարգումը:

ՀՀ պատվիրակությունը մասնակցել է սեպտեմբերի 14-18-ը Վիեննայում կայացած ԱԷՄԳ Գլխավոր կոնֆերանսին:

Շարունակվել է համագործակցությունը Քիմիական զենքի արգելման կազմակերպության (ՔՁԱԿ) շրջանակներում: Մայիսից Հայաստանը երկու տարի ժամկետով անդամակցել է ՔՁԱԿ գործադիր խորհրդին:

ԱԳՆ կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Կենսաբանական զենքի վտանգի նվազեցման կոնվենցիայի Հայաստանի Հանրապետությունում ներդրման ծրագիրը:

Կանոնավոր փոխգործակցություն է ընթացել ՄԱԿ-ի Զինաթափման գրասենյակի հետ, Հայաստանը ՄԱԿ ԳԱ Առաջին կոմիտեում համահեղինակել է 7 բանաձև՝ միջուկային զենքի չտարածման և ռիսկերի նվազեցման, տիեզերքում առաջինը զենքերի չտեղադրման, սովորական սպառազինությունների վերահսկման վերաբերյալ:

Աշխատանքներ են կատարվել ՀՀ-ում երկակի և ուղղակի նշանակության ապրանքների արտահանման վերահսկման ոլորտում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստանը շարունակել է մասնակցությունը Եվրոպայի խորհրդի և դրա տարբեր կառույցների աշխատանքներին:

Ապրիլի 22-24-ը «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումին, ինչպես նաև Երևանում անցկացվող Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստան է այցելել ԵԽ Գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը:

Ապրիլին Հայաստանում էր գտնվում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Անն Բրասերը:

Ապրիլին Հայաստան է այցելել ԵԽ նախարարների կոմիտեի նախագահ, Բելգիայի փոխվարչապետ և արտգործնախարար Դիդյե Ռեյնդերսը:

Մայիսին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել և ելույթ է ունեցել ԵԽ նախարարների կոմիտեի Բրյուսելում կայացած նիստին:

Տարվա ընթացքում Հայաստան են ժամանել ԵԽԽՎ մոնիթորինգային հանձնաժողովում Հայաստանի պարտավորությունների հարցով համազեկուցողները, ԵԽ-ին անդամակցությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը դիտարկող ԵԽ Գլխավոր քարտուղարության պատվիրակությունը, ԵԽ տարբեր կառույցների ներկայացուցիչներ:

Հայաստանի իշխանությունների խնդրանքով՝ ԵԽ Վենետիկի հանձնաժողովը կատարել է «ՀՀ սահմանադրության փոփոխությունների» նախագծի փորձաքննությունը, որը հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես «բարձր որակի» և «միջազգային չափանիշներին համապատասխան»:

Դեկտեմբերի 6-ին ՀՀ Սահմանադրության հանրաքվեին ներկա է գտնվել ԵԽԽՎ դիտորդական առաքելությունը:

Սեպտեմբերին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն հաստատել է Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի 2015-2018թթ. գործողությունների ծրագիրը:

Հունիսին Հայաստանի թեկնածու Արմեն Հարությունյանն ընտրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր:

Ապրիլին Հայաստանը դարձել է ԵԽ «Մշակութային ուղիներ» համաձայնագրի լիիրավ անդամ:

Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի Խորհրդի տարբեր ատյանների շրջանակներում կոմիտեների նիստերի, ինչպես նաև Հայաստան-ԵԽ Գործողությունների ծրագրի շրջանակներում՝ մի քանի տասնյակ միջոցառումների և համաժողովների:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2015թ. ընթացքում Հայաստանը եղել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամենաակտիվ անդամներից՝ ներգրավված լինելով կազմակերպության տարբեր կառույցների աշխատանքներում:

Մարտի 3-ից ապրիլի 30-ը Հայաստանում կայացած Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում Երևանում և Հայաստանի մի շարք մարզերում կազմակերպվել են շուրջ 550 միջոցառումներ:

Հոկտեմբերի 10-11-ը Երևանում տեղի է ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության արտգործնախարարների համաժողովի 31-րդ նստաշրջանը, որին մասնակցել է անդամ և դիտորդ 80 երկրների և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության քարտուղարության շուրջ 500 ներկայացուցիչ: Համաժողովի շրջանակներում կազմակերպված էր նաև հարուստ մշակութային ծրագիր, որի գլխավոր իրադարձությունը Շառլ Ազնավուրի համերգն էր:

Նախարարական համաժողովի ընթացքում ընդունվել է հինգ բանաձև, որոնց թվում էին Հայաստանի նախաձեռնած «Ցեղասպանության կանխարգելման մասին», «Ֆրանկոֆոնիան որպես խաղաղության, հանդուրժողականության, բազմազանության, երկխոսության և փոխըմբռնման տարածք» ու «Կլիմայական փոփոխության մասին Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային կոնվենցիայի անդամ պետությունների 21-րդ համաժողովի մարտահրավերների մասին» բանաձևերը:

Համաժողովին հաջորդել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Միկայել Ժանի պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում կայացել են նրա հանդիպումները ՀՀ Նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ՀՀ ԱԺ Նախագահի, ՀՀ վարչապետի և ՀՀ արտգործնախարարի հետ:

2015թ. մարտի 30-ից ապրիլի 2-ը Հայաստանը հյուրընկալել է Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպայի տարածաշրջանային համաժողովը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ակտիվ համագործակցություն է ծավալվել միջազգային ֆինանսական և վարկային կառույցների հետ՝ Համաշխարհային բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրասիական զարգացման բանկի հետ, կնքվել են մի շարք վարկային համաձայնագրեր և պայմանագրեր, որոնք նպատակաուղղված են Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների հետագա զարգացմանը:

Հայաստան են այցելել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի նախագահը, Եվրասիական զարգացման բանկի վարչության նախագահը,

Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով փոխնախագահը, Եվրոպական ներդրումային բանկի 2 փոխնախագահները, Միջազգային ֆինանսական կորպորացիայի փոխնախագահը, Ասիական զարգացման բանկի Կենտրոնական և Միջին Ասիայի տարածաշրջանի գլխավոր տնօրենը, Արժույթի միջազգային հիմնադրամի պատվիրակությունը:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հետ համագործակցության շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարը հունիսին մասնակցել է Հոմում կայացած ՊԳԿ 39-րդ նստաշրջանին:

Մեպտեմբերի 29-ից նոյեմբերի 1-ը Երևանում անցկացվել է ՀՀ կառավարության, ՄԱԿ-ի տարածաշրջանային հանձնաժողովների և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Էներգետիկան կայուն զարգացման համար» եռօրյա միջազգային 6-րդ ֆորումը, որին մասնակցել է 50 երկրների շուրջ 250 ներկայացուցիչ:

Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն

Հայաստանը շարունակել է մասնակցել Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՄԾՏՀԿ) շրջանակներում իրականացվող գործունեությանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, տրանսպորտի, զբոսաշրջության և առողջապահության ոլորտներում:

Հունիսի 18-ին Քիշնևում և դեկտեմբերի 11-ին Բուխարեստում Հայաստանը մասնակցել է ՄԾՏՀԿ ԱԳ նախարարների խորհրդի հանդիպումներին:

Նոյեմբերի 19-20-ը Երևանը հյուրընկալել է ՄԾՏՀԿ Հեռուստառադիոհեռարձակման դաշտը կարգավորող մարմինների ֆորումի 6-րդ հանդիպումը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հանրապետության Նախագահի՝ ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում պետական մարմինների գործունեությունը համակարգելու վերաբերյալ հրամանագրի դրույթների համաձայն՝ Արտաքին գործերի նախարարությունը համակարգել է Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը:

Արտաքին գործերի նախարարությունը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները նպաստել են խորհրդարանական դիվանագիտության ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ բարեկամական խմբերի փոխայցելություններին, միջխորհրդարանական հանձնաժողովների նիստերի անցկացմանը, միջխորհրդարանական կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Արտգործնախարարությունը շարունակել է աշխատել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ՝ աջակցելով Սփյուռքի նախարարության ծրագրերին և նախաձեռնություններին:

ՀՀ ԱԳ նախարարության ուշադրության կենտրոնում են եղել արտերկրում ՀՀ մշակութային ժառանգության պահպանման, հայկական մշակույթի ներկայացման, տարբեր պետությունների հետ մշակութային կապերի խորացման հարցերը: Այս ուղղություններով նախարարությունը համակողմանի աջակցություն է ցուցաբերել ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվող աշխատանքներին:

Մայիսին Երևանում տեղի են ունեցել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) նախարարական գագաթնաժողովն ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումը, որոնց մասնակցելու նպատակով Հայաստան էին ժամանել շուրջ 400 մասնակիցներ 47 երկրից և միջազգային կազմակերպություններից:

Շարունակել է ընդլայնվել ապակենտրոնացված համագործակցությունը: Այդ նպատակով ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից աշխատանք է իրականացվել Հայաստանի մարզերի և քաղաքների՝ տարբեր երկրների վարչատարածքային միավորների հետ հարաբերությունների հաստատման, փոխգործակցության ընդլայնման և խորացման ուղղությամբ:

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

2015թ. ստորագրվել է 89 միջազգային պայմանագիր և 21 միջազգային պայմանագիր չհանդիսացող փաստաթուղթ, վավերացվել է 68 և ուժի մեջ մտել 42 միջկառավարական, միջպետական և միջգերատեսչական փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ արձանագրություն է ստորագրել Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության հետ:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ մշակվել և ընդունվել են շուրջ 80 իրավական ակտեր:

ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 137 000 քաղաքացի:

Փոփոխություններ են իրականացվել գործող իրավական ակտերում, որոնցով կանոնակարգվել և առավել դյուրացվել են քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները:

Աշխատանքներ են կատարվել օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների իրավունքները և շահերը պաշտպանելու, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

ՀՀ ԱԳՆ-ն շարունակել է աջակցության ցուցաբերումը սիրիահայերին, լիբանանահայերին և իրաքահայերին, արտակարգ իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին՝ փաստաթղթային, Հայրենիք վերադարձի և այլ հարցերում:

ԱԳՆ հյուպատոսական վարչությունը շարունակել է www.tundarc.am տեղեկատվական համակարգի սպասարկումը՝ ԱԳՆ իրավասության շրջանակներում, պատասխաններ են տրվել ՀՀ քաղաքացիների դիմումներին, ինչպես նաև պարզաբանումներ են տրամադրվել տեսակապի միջոցով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Արտգործնախարարության ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման, արտաքին քաղաքականության տեղեկատվական ապահովման և հանրային դիվանագիտության ուղղությունները:

Հանրապետության Նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ մամուլի ասուլիսներ և հարցազրույցներ են տվել հայաստանյան, ինչպես նաև աշխարհի հեղինակավոր լրատվամիջոցներին:

Հոկտեմբերի 1-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հանդես է եկել ելույթով «Քարնեգի» հիմնադրամում՝ ԱՄՆ փորձագիտական հանրության ներկայացուցիչների առջև:

Փետրվարին Փարիզում հրատարակվող «Միջազգային քաղաքականություն» («Politique Internationale») հանդեսը, որը միջազգային քաղաքագիտական և դիվանագիտական աշխարհի ամենահեղինակավոր հրատարակություններից է, հրապարակել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հոդվածը:

Ապրիլին «Politique Internationale»-ը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված 330 էջանոց, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հատուկ համար է հրապարակել, որում, ի թիվս այլ հոդվածների, ներառվել են ՀՀ Նախագահի, Ֆրանսիայի ներկայիս և նախկին նախագահների, ՀՀ արտգործնախարարի հրապարակումները, ցեղասպանագիտության, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների ոլորտում առաջատար բազմաթիվ մասնագետների հոդվածներ: Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հատուկ համարներ են հրապարակվել նաև մի շարք առաջատար միջազգային ամսագրերի կողմից:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում աշխարհի բոլոր մայրցամաքներում հազարավոր հրապարակումներ և հաղորդումներ են եղել, այդ թվում այնպիսի հեղինակավոր հեռուստաընկերություններով և պարբերականներով, ինչպիսիք են՝ “CNN”, “AFP”, “Reuters”, “The New York Times”, “Washington Post”, “Euronews”, “Россия 24”, “Russia Today”, “Al Jazeera”, “Deutsche Welle”, “WDR”, “RAI”, “France 24”, “Le Monde”, “Figaro”, “BBC”, “The Guardian”, “The Independent”, “The Times”:

Հայոց ցեղասպանության մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների շրջանակում ՀՀ արտգործնախարարությունը նպաստել է “Balista” բրիտանական ընկերության կողմից Հայոց ցեղասպանությունը վկայող բրիտանական հայտնի Կապույտ գրքի հիման վրա “The Blue Book: Evidence of Armenian Genocide” կարճամետրաժ փաստավավերագրական ֆիլմի նկարահանմանը: Տարբեր երկրներում կազմակերպվել են ֆիլմի ցուցադրություններ:

Ապրիլի 22-23-ը Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի ընթացքում հնչած ելույթների ու զուգահեռ ընթացող միջոցառումների արդյունքում լույս է ընծայվել “Against the Crime of Genocide” ժողովածուն:

Մարտի 9-ին ԱԳ նախարարը Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ծավալուն ելույթով հանդես է եկել Լյուբլյանայի համալսարանում:

Ապրիլի 6-ին ռուսական «Միջազգային հարաբերություններ» հանդեսում լույս է տեսել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցը: Ապրիլի 7-ին պաշտոնական այցով Մոսկվայում գտնվող ԱԳ նախարարը «TACC» լրատվական գործակալությունում հանդիպում է ունեցել ռուսաստանյան առաջատար լրատվամիջոցների գլխավոր խմբագիրների հետ:

Մայիսին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Վաշինգտոնի Ազգային մամլո ակումբում հանդիպում է ունեցել տասնյակ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, պատասխանել նրանց բազմաթիվ հարցերին:

Սեպտեմբերի 9-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ծավալուն հարցազրույց է տվել “BBC”-ին:

Սեպտեմբերի 10-ին ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ելույթ է ունեցել Լոնդոնի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում (Chatham House):

ԱԳ նախարարությունը աջակցություն է ցուցաբերել Հայաստանի մասին նյութեր պատրաստած մի քանի տասնյակ օտարերկրյա լրագրողների:

Հոկտեմբերին Երևանում կայացած Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի երրորդ միջազգային համաժողովին

ընդառաջ լույս տեսած “MGIMO-Journal”-ի համարն ամբողջությամբ նվիրված էր Հայաստանին: Այնտեղ հրապարակվել էր նաև ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցը:

Տարվա ընթացքում ԱԳՆ կողմից հավատարմագրվել է արտերկյա 500-ից ավելի լրագրող, որոնց ցուցաբերվել է համակողմանի աջակցություն՝ հանդիպումների և հարցազրույցների կազմակերպման, Հայաստանի մարզեր և Արցախ այցելությունների և այլ հարցերում: